Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-Գ35.2-18.2-12.2-Մ2-3 Գլխավոր մասնագետ(2026-03-24)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | 112 օպերատիվ կառավարման կենտրոն | Ճգնաժամային կառավարման վարչություն | Արտակարգ իրավիճակների կանխատեսման, քարտեզագրման և տարածական վերլուծության բաժին | Գլխավոր մասնագետ, (27-Գ35.2-18.2-12.2-Մ2-3)

1.2 Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Նախարարության գլխավոր քարտուղարի հրամանում նշանակված անձը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Մովսես Խորենացի 158:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է տեղեկատվության ներմուծում (այդ թվում՝ նաև ձևաչափային հարմարեցմամբ) էլեկտրոնային քարտեզագրական համակարգ՝ ապահովելով հիդրոլոգիական, օդերևութաբանական, աշխարհագրական համակարգերի շտեմարանների արդիականացումը.
2. համագործակցում է իր իրավասության սահմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ մշտադիտարկման արդյունքների, գործունեության համար անհրաժեշտ այլ տեղեկատվության հավաքագրման և փոխանակման գործում,
3. իրականացնում է իր իրավասությանը վերապահված ոլորտներին առնչվող՝ այլ մարմինների կողմից կատարված մշտադիտարկման արդյունքների ձեռքբերման, դրանց մշակման, ընդհանրացման ու համակարգման, ինչպես նաև էլեկտրոնային քարտեզագրական համակարգ մուտքագրման աշխատանքներ.
4. իրականացնում է ըստ սահմանված ձևաչափերի (քարտեզներ և տեղեկագրեր) և ժամկետների՝ շահագրգիռ մարմիններին ու պաշտոնատար անձանց Հայաստանի Հանրապետությունում գրանցված արտակարգ իրավիճակների ու պատահարների մշտադիտարկման արդյունքների, դրանց վերլուծության, կանխատեսումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման աշխատանքներ.
5. իրականացնում է վերլուծության հիման վրա արտակարգ իրավիճակների ու պատահարների, ըստ տարիների, համեմատական քարտեզների կազմման աշխատանքներ.
6. իրականացնում է հնարավոր իրավիճակային (սցենարային) կամ այլ ոլորտային վերլուծական հենքի եռաչափ արտապատկերման մոդելների կառուցման, մասնավորապես՝ արտակարգ իրավիճակների, ներառյալ՝ ճանապարհատրանսպորտային պատահարների կառավարման կապակցությամբ հաջորդաբար զարգացող հնարավոր իրադարձությունների կանխատեսման և, ըստ այդմ, կենտրոնի կողմից իրականացվելիք կողմնորոշիչ գործողությունների մոդելավորման աշխատանքներ.
7. իրականացնում է իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում, ըստ ուղղությունների, տարաժամկետ կանխատեսումների աշխատանքներ.
8. իրականացնում է մշտադիտարկման, իրավիճակի մոդելավորման և կանխատեսման գործընթացի կատարելագործման և արդիականացման աշխատանքներ, ինչպես նաև տարբեր ոլորտներում դրանց արդյունքների և արտակարգ իրավիճակներում դրանք արդյունավետ կիրառելու ուղղությամբ առաջարկություններ է ներկայացնում Բաժնի պետին:

Իրավունքները.

- պահանջել և ստանալ համապատասխան նյութեր, տեղեկատվություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ մշտադիտարկման արդյունքների հավաքագրման և փոխանակման, գործունեության շրջանակներում.
- պահանջել և ստանալ պետական կառույցներից և Նախարարության այլ կառուցվածքային ստորաբաժանումներից համապատասխան նյութեր, հուշագրեր, համաձայնագրեր, մշտադիտարկման արդյունքներ և այլ փաստաթղթեր էլեկտրոնային քարտեզագրական համակարգ մուտքագրելու նպատակով.
- ստանալ կարծիքներ, առաջարկություններ, հաշվետվություններ համատեղ իրականացվող ծրագրերի, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների, խորհրդակցությունների, քննարկումների, սեմինարների ընթացքում քննարկվող խնդիրների վերաբերյալ.
- ընդգրկվել ոլորտային անալիտիկ հետազոտությունների և ուսումնասիրությունների իրագործման աշխատանքներին.
- մասնակցել արտակարգ իրավիճակների կանխատեսման, քարտեզագրման և տարածական վերլուծության ոլորտի միջազգային ծրագրերով նախատեսված աշխատանքներին, համատեղ իրականացվող ծրագրերին, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին:

Պարտականությունները.

- վերլուծել և համեմատել հավանական ռիսկերը և ներկայացնել առաջարկություններ արտակարգ իրավիճակների ու պատահարների վերաբերյալ.
- ներմուծել համապատասխան տեղեկատվություն էլեկտրոնային քարտեզագրական համակարգ.
- հավաքագրել, վերլուծել արտակարգ իրավիճակներն ու պատահարները ըստ տարիների.
- ներկայացնել Բաժնի պետին արտակարգ իրավիճակների կանխատեսման, ոլորտին առնչվող միջազգային փորձի ուսումնասիրման և վերլուծման արդյունքները և դրանց հետ կապված համապատասխան նյութեր ոլորտի կատարելագործման և բարեփոխման նպատակով՝ հնարավոր իրավիճակային (սցենարային) կամ այլ ոլորտային վերլուծական հենքի եռաչափ արտապատկերման մոդելներ կառուցել.
- ներկայացնել առաջարկություններ Բաժնի պետին արտակարգ իրավիճակների մշտադիտարկման, իրավիճակի մոդելավորման և կանխատեսման գործընթացի կատարելագործման և արդիականացման վերաբերյալ.
- պատրաստել համապատասխան փաստաթղթեր, նյութեր (պլան-ծրագրեր, քարտեզներ, տեղեկագրեր և այլն) արտակարգ իրավիճակների կանխատեսման, քարտեզագրման և տարածական վերլուծության ոլորտում Նախարարության քաղաքականության իրականացման նպատակով.

- ներկայացնել տեղեկություններ ըստ սահմանված ձևաչափերի (քարտեզներ և տեղեկագրեր) և ժամկետների՝ շահագրգիռ մարմիններին ու պաշտոնատար անձանց Հայաստանի Հանրապետությունում գրանցված արտակարգ իրավիճակների ու պատահարների մշտադիտարկման արդյունքների, դրանց վերլուծության, կանխատեսումների վերաբերյալ.
- ուսումնասիրել և վերլուծել արտակարգ իրավիճակների կանխատեսման, քարտեզագրման և տարածական վերլուծության ոլորտին առնչվող տեղեկատվությունները.
- ուսումնասիրել և պատրաստել անալիտիկ վերլուծության արդյունքում արտակարգ իրավիճակների կանխատեսման, քարտեզագրման և տարածական վերլուծության գործընթացների իրագործմանն ուղղված կարգերի, պլանների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի նախագծերը:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի կամ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության կամ համակարգչային համակարգերի մշակման և վերլուծության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցու ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: